



ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՅՐԵՐԻ ՀԻՆ ԱՆՌԻՆՆԵՐԻ ՎԵՐԱԿՈՆԳՆՈՒՄ



Եթ հայրենիքի բաղաբական և
մշակույթային կյանքի վե-
րածնության ու ծաղկման
քայլերին ցանկալի է միաց-
նել մի նոր զիծ ևս, տեղերի կամ
վայրերի պատմական անունների վե-
րականգնումը։ Երանի թե մեր հա-
յափառ կամ բանասեր գիտնականներին
հանձնարարվեր կամ նրանք ինքնարերաբար
հանձն առնեխն այդպիսի մի աշխատություն,
ալսինքն կազմել գավառների, տեղերի և
դյուլերի հին, պատմական անունների բա-
ռարան, համառոտ բացատրությամբ և քար-
տեղներով՝ ըստ շրջանների։ Այդ ուղղու-
թյամբ իր ժամանակին շատ մեծ գործ է
կատարել Դ. Ալիշանը։

Պատմական հանգամանքների բերմամբ,
հայրենի երկրի իշխանությունների անկմամբ
և այլազգի տարրերի խուժմամբ, հետզետե
հտ են մղվել տեղերի հայկական անունները
և գործադրյի խժաղուժ նոր անուններ.
այդպիսիներից շատերը կարելի է սրբա-
գրել, վերականգնելով իրենց իսկական
հին անունները, որոնք հիշված են մատե-
նագիրների, հիշատակարանների և արձա-
նագրությունների մեջ։ Հիշենք մի քանի
անուններ, մեր միտքն ավելի պարզելու հա-
մար։

Երևանից դեպի Էջմիածին տանող ճանա-
պարհի վերա գտնվող Զաֆարաբագ կամ
Փարաբար հինավուրց գյուղի հին անունն է
Կավակերտ։ Էջմիածինից դեպի Ապարան
տանող խճուղու վերա, Կարբի գյուղից քիչ
բարձր, գտնվում է Իլան-չալան գյուղը,
որի անունն է Որդկան՝ նշանավոր իր հին
ամերակների մնացորդներով։

Պատմախ ակոնքներից դեպի միջին
հոսանքները ունինք մի շարք վայրերի
անուններ, որոնց հայերենը՝ հայտնի են:
Մի ձեռագրի մեջ, գրված 1641 թվին, պահ-

ված են Քասախի երկու կողմերի գյուղերի
անունները, որոնք տեղավորված են «Այս են
անունք նիկ գաւառին, որ ասի Ապարանք-
վերնագրի տակ»*) նախ հիշված է գետի
ակոնքներին շինված ավանը՝ «Ծ վերայ
Քասախ գետոյն ականցն ըստ անուան
գետոյն կոչի և գեղոն Քասախ», որ այժմ
Բաշ-Ապարան է կոչվում։ Այստեղ է Քասա-
խի հանավոր բազիկիկան, որի հնությունը
մինչև Ե դար կարող է հասնել. հյուսիսային
մասը կանգուն է, արխայիկ պայտաձն
կամարներով, ինչպես Տիկորն էր։ Ուզա-
դրության արժանի են նաև արևմտյան և
հարավային գոների հակատաքարերի քան-
դակները՝ միջագետական-ասորական ար-
ժակների, եղջերուների և այլ քանդակ-
ներով։ Հարավային դռան քանդակների
կրկնությունը ունինք Ակնա գյուղում։ Բացի
դրանից, այստեղ կար մի ավելի փոքրիկ
եկեղեցի ևս, խոյակի երեսների վերա-
շուշանածաղիկ և շնագլուխ մի փիգուր
քանդակված, որը փոխադրել ենք էջ-
միածնի թանգարանը։ այս եկեղեցին ոչ
պակաս հին է, քան մեծ եկեղեցին։ Այստեղ
էր պահպաժ և Տրդատի հունարեն արձանա-
դրությունը, ոո նույնպես փոխադրվեցավ
նախ էջմիածին և ապա Երևան ու ուսումնա-
սիրության ենթարկվեցավ Մատի. Սմիռնո-
վի և Ռուստովցելի կողմից, համարվելով
Տրդատ քրիստոնյայի գործ։

Ապա գետի աշակեռու հիշած են հետե-
ալ գյուղերը. — ԱՐՄՎԱԾՈՒԻ Քաֆարու,
ԱՂԲԵՐԱԿՔ — Փաւանաւու, ՃԵՐՄԱԿ ՎԱՆԻՉ-
ԱԽՈՎՈՒ, ԱԼ, ԽՈՏԱՎԵՏԻՆ — ԲԻԽԵՐԵՆ է, ՎԱՐ-
ԻՒՆՈՒՏԻՇ — Շիրաղալեն է։ Վարդինուտը
կիրակոս Գանձակեցին Վարդենիս է կոյում,
ուր Վանուտան Քուրո հշխանու հյուսոնկապ-
լեց Հերում Ա. հին, երբ նա գնում էր Մանկու-

*) Ջեռ- էջմիածնի, այժմ Պետ. Մատի-
նադարանի № 2915 (2180, 416 ա և բ)։

խանին տեսության, Ալիշանը Վարդենիսը
նույնացնում է Քյուլինեի հետ*), որ
հավանական է, և հեռու չէ ծիրաղալեփից:
ԵՐԻՆՑԱՏԱՓՆ — Ղարաբալին է, ապա ա-
զելայնում է՝ «ԱՍՏՈՒԱԾԸՆԿԱԼՆ աստ է»,
այժմ էլ նույն անունով կոչված Ալտեղ է
նույնանուն տաճարը, որ շինել է Վաչու-
տյան Քուրդ իշխանը ուր կնոջ՝ Խորիշա՛
Մամիկոնյանի հետ ՈՂԳ-1244 թվին: Բայց
Վաշուտյաններից էլ առաջ այստեղ եղել են
շնչեր, որոնց մեջ և մի բազիլիկան եկե-
ղեցու մնացորդ: Վերջին գյուղը՝ «ԱՓՆԱ-
ԳԵՂՆ եղր է ամենուն»:

Ավելա գյուղի մեջ երկու փոքր բազիլիկ
եկեղեցիների մնացորդներ կան, մեկը ավե-
րակ, մյուսը նորոգված և այժմ գործածու-
թյան մեջ: Երկուսի հարավային դռների
ճակատաքարերի քանդակները նման են
Քասախի բազիլիկացի հարավային պատի
արեկելյան դռան քանդակին, սասանյան
շրջանի հայ արվեստի ոճով: Ուշագրության
արժանի է այստեղ մի խոյակ, հար և նման
յուր ձեռվ ու քանդակնեցով Խոսրով Ապու-
սկի, Տագ ի բաստանի մի խոյակին, միայն
Անահիտ դիցունու պատկերագանդակին
խան է փոխարիսնված: Կա նաև գերեզմա-
նական կոթողի մի մնացորդ**):

Բայց հայ հնագետների ուշադրությանն
ենք հանձնում հատկապես մի հանդամանք.
Գյուղի հյուսիսային կողմը, որտեղ հին
գերեզմանատունն է, երեսներս վեպի հյու-
սիս ճանապարհի աջ կողմն ընկած էին
երկու քար, երկարության ուղղությամբ մի
Հարթագանդակ Տրդատա թախտի ոճով, որ
Ստրշիգովսկին տեղական ազդեցություն է
համարում, իսկ մի երրորդը՝ ճակատի անհ-
յուններն իրար կապող, ավելի խորը քանդակ-
ներով: Երկրորդ անգամ, երբ զնացինք այդ
քարերը կուտանքարելու, տարաբախտաբար
շարժված էին ու մի շենքի մեջ գործադրված.
Բայց գյուղացիք, երկի պատժի երկրություն,
տեղը ցույց շտվին: Հավատացած ենք, որ
նման մի շենք եղել է Ափինա կամ Հարեւան
գյուղերից մեկում: Ուշադիր հարցաքննու-
թյունն ու հետախուզությունը քաղերի մա-
սին, գուցե կապրզե խնդիրը, թե ո՞րտեղից
էին բերված և ջարդված մասեղոր ո՞ր շենքի
մեջ են տեղափորված: Այդպիսի շենքի գոյու-
թյունը, ինչպիս ոմանք կարծիք էին հայտ-
նել, անկարելի չէ, բանի որ Տրդատի հու-

նարեն արձանագրությունն էլ Քասախումն
էր պահված, Գնիունյաց անվան հետ
կապված բովանդակությամբ: Զենք կարծում,
թե այդ քարերը Գառնիից բերված լինեին,
ինչպես երկու խոյակները բերված էին
Երևան, որ Էջմիածնի թանգարանը փոխա-
գրեցինք: Երողության առաջ անկարելիու-
թյան խոսք չափուի անել, տեղին չէ: Որ
հունա-հոռմեական տճով շենք կամ շենքեր
ունեցել ենք այդ շրջանում, ապացույցն
ունինք Սամարաբլշիցի եկեղեցու մի ան-
կյունագարը*):

Գետի ձախ կողմի գյուղերը վերին հո-
սանքից սկսած, ուստ ձեռագրի, հետևյալ-
ներն էին: — ՃԱՆՑԻԿ- Չորավալուն: ասիլ
շենք կարող, թե սոքա տարբեր գյուղեր են,
որ հավանական ենք համարում, թե նույն
վայրի երկրորդ անոնքը լինի: ԳՈՒԱՊԱՏԻ-
Գուրերլու, հավանորեն տարբեր վայրեր:
Գուլապատին ներկա Գյուղավլուն է: «ԵՂԻ-
ՊԱՏՐՈՒԵՆ»— Տամշիլու ասիլ, ալժմ էլ Տամ-
շիլու է կոչվում: այստեղից էր ծասցի կա-
թողիկոսը: Բայց Եղիպատրուշը շատ ավելի
հին էր, քան Ը դարի վերջին քառորդը և
մեկը Գնիունյաց կենարոններից: Ունի քը-
րիստոնեական շրջանի հին հիշատակներ,
մեկը ուշ, քան Ժ դարը, բայց ավելի
շատ Վաշուտյանց շրջանից: Այնտեղ կա և
մի գերեզմանագար Գնիունյաց իշխանի
թվականով, արաբական շրջանի, օրորոցա-
ձև:

Տամշիլուց քիչ հեռու անԻԳԱՏՈՒՆՆ-
Պալարշուղ ասիլ». անունը ցույց է տալիս,
որ վայրը նշանավոր պիտի լիներ: Մի քա-
նի մզոն կետի ընթացքով՝ ՄԱՐԱՅԻՇԵՆՆ-
ՍԱԼԱԴԱՍՈՒՄ, որ նշանավոր է յուր ճար-
տարապետական հնություններով: մնացել
են մի փոքրիկ եկեղեցու մնացորդները,
խոյակները Տիկորի ոճով, իսկ մի ալլ եկե-
ղեցի Պտղոնիի նման, աջ դասի որմաց երե-
սին «ԴԻՌԿՈՌ ԳՆԻՈՒՆՆԱՅ Տ ԷՐ» արձանա-
դրությամբ**) որ եկեղեցու շինողն է: այստեղ
կան գերեզմանական մի կոթող և ալլ հնա-
գույն հիշատակներ:

Ճայինիոյս նիւսիսակաղման լերին է Սր.
ուխտե Թեղենիս» հայ նշանավոր վանքերից
մեկը անցյալում, նշանավոր նաև բոլոր
ճարտարապետական մնացորդներով:

Տալիս ենք գյուղերի դասավորությունը
ըստ ձեռագրի մեջ գծագրված քարտեսի,
կիտի աջ և ձախ կողմերից:

*) Այրարատ, 253:

**) Տես մեր՝ Նիւթեր և Ռւսումնասիրու-
թիւններ. Պրակ Դ, եր. 30-31:

*) Անդ. եր. 21, պատկեր 13:

**) Անդ. եր. 30:

ահ վերայ Քասախ գետոյն ականցն ըստ անուան գետոյն կռշի և գեօղն
ՔԱՍԱԽ

Յաջմէ և յահեկէ

Արագածու	Ճանճիկն
Թափարլու	Չորագլուխն
Աղքերակի	Գուլապատի
Փալշխալու	Գութերլու
Ճերմակ վաճեֆ	Եղիպատրուշն
Ալաբուշակի	Տամշիլու ասի
Խոտակտն	Նիգատուենն
Բլիսէրն է	Ղալարչաւդ ասի
Վարդինուտ	Մառայիշէնն
Շիրաղալէն է	Մալաղաւում
Երինճատափին	Յայնկոյս նիւսիսակողման լերին
Ղարաբուլախին է	Սր. ուխտն թեղենիս

Աստուածընկալն աստ է

Ափեազեղն եզր է ամենուն

Այս ցանկի մեջ չի հիշատակված Ղարաբիլիսենն, ոեպի կենինական տանող խճուղու վերա, ուր գտնվում էր ՀԱՍՍՆ ԳՆԹՈՒՆ-ՑԱՑ ՏԵՐ-ի գերեզմանաբարը, որն էջմիածին տարանք. այս գերեզմանաբարն օրորոցածն է և նախապես ձգված էր մի ննջեցյալի գերեզմանի վերա. Այս Հասանն ար-

դու՝ Ուղուզլուի եկեղեցու արձանագրության մեջ հիշվածն է, որդի Խականա, որի որդիքն՝ Աշոտը և Գրիգորը Մմբատ Ա-ի կողմից նորանվաճ Տաշրաց երկրի վերակացու նշանակվեցան և որոնք հետո ապատամբեցին Աշոտ երկաթի դեմ*):

Հ. Այս հոդվածը գրված էր ամիսներ առաջ, երբ Թեհրանի «Վերածնունդ» թերթի (թ. 160 օգոստոս 1946 թ.) մեջ կարդացինք Հ. Աճառյանի ուրիշ գրվածքների շարքում, բայց դեռևս անավարտ «Տեղանունների բառարան»-ի մասին.

«Այս աշխատության մեջ բերված են հայ հին մատենագրության մեջ հիշատակված

բոլոր անուններն իրենց ստուգաբանությամբ, տեղագրությամբ, աշխարհագրությամբ»: Երանի շուտ վերջանար գործը և օգտագործվեր մեր վերև ակնարկած նպատակի համար, որ մեր հայրենիքի վերանորոգական շինարարության կարևորագույն գործերից մեկը կլիներ:

Հեղինակ

2. Աճառյանը «Տեղանունների բառարան» կազմելու աշխատանքի դժվարագույն մասը կատարել է. սակայն ներկայումս զբաղված է ուրիշ աշխատություններ պատրաստելով

և մտադիր է «Տեղանունների բառարան» կազմելու աշխատանքը վերսկսել միայն 1952 թվականին:

Մանոք. ԽՄԲԱԳԲ.

*) Եիրակ 15, Յովհաննէս կաթողիկոս: